

Ներկայ պապը Լևոն XIII-ի սկսածներն շարունակող է ուղղում հանդիսանալ ի թիւս այլոց՝ նաև Բիբլիական գիտութեան գործում: Լևոն XIII-ն այդ նպատակաւ յատուկ Բիբլիական մասնաժողով էր հաստատել, որի ներկայացուցիչներն ներկայ պապն ընդունեց փետրուարի 26-ին և մատնանիշ արաւ մի նոր խնդրի վրայ՝ որ նրանք պէտք է աշխատեն պատրաստել կաթոլիկ դպրոցների համար սուրբ գրքի ուսուցիչներ:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Այս տարի լրացաւ «Բրիտանական և արտասահմանեան Բիբլիական նշանաւոր ընկերութեան 100ամեակը (1804 թ մարտի 7-ին հիմնուած)»։ Լոնդոնում Մարտի 4-ից մինչև 9ը տօնուում էր «Բիբլեական շաբաթը»՝ յօրեկէսական տօների մի երկար շարք էր այդ՝ յատուկ պաշտամունքով, որը տեղի ունեցաւ Թագակիր անձերի և նրանց ընտանիքի անդամների ներկայութեամբ՝ զանա- նազան ժողովներով ու ցուցարար համախմբումներով ի պատիւ այդ ընկերութեան: Այդ համախմբումների ժամանակ նշանաւոր էր մանկական ժողովը, որին ներկայ էին 12 հազար մանուկներ: Համարեա ամբողջ բողոքական աշխարհը, որ հանդիսանում է «Բիբլեական» քրիստոնէութիւն, միացաւ այդ ընկերութեան հարկւրամեակի տօնախմբութեան. ընկերութեան, ոչն իւր գոյութեան ընթացքում ահագին ջանք է գործ դրել Աստուածաշունչը տարածելու և Բիբլիական միւս ընկերութիւններին իբրև հիմունք ծառայել: Մարտի 6-ը որոշուած էր տօնել բողոքական բոլոր եկեղեցիներում իբրև «Բիբլիական կիւրակէ»: Կաթոլիկներն իհարկէ այս հանդէսներից հեռու էին պահում իրենց և նոյն իսկ անգլիացիների մէջն էլ կասկածներ էին առաջ գալիս եկեղեցու պաշտօնական մասնակցութեան վերաբերութեամբ: Մատնանիշ էին լինում այն հանգամանքի վրայ, որ առանց մեկնութիւնների և ծանօթութիւնների իւրաքանչիւր ազգի մայրենի լեզուով Աստուածաշունչ տարածելու գործին նուիրուած ընկերութիւնը—իւր այդ նպատակն իրագործում է բողոքական ոգով: Որ նրա ներկայացուցիչները (colporteurs), հակառակ իրենց տրուած հրահանգի՝ Աստուածաշունչը տարածում են երբեմն հակաեկեղեցական քարոզներով, մանաւանդ կաթոլիկ երկիրնե- րում, «քրիստոնէաներին աւետարանական դարձնելով» և նրանց եկեղեցուց անջատելով: Այս բանով էին բացատրում կաթոլիկ

հոգեւորականներին ձեռնպահութիւնը: Այդ ընկերութեան բողոքական և ծայրահեղ վերափոխական ոգին արտայատուած է այն բանում, որ նրանք իրենց Աստուածաշնչից արտաբոլում են ոչ կանոնական գրքերը, որոնք յարգուած են և Անգլիական եկեղեցու կողմից: Ահա այդ բանի համար էլ անկարելի համարուեց ներկայացնել ընկերութեան Աստուածաշունչը էզուարդ VII-ի Թարգմանութեան ժամանակ՝ նրա եկեղեցական չքլինելու պատճառով: Ընկերութեան գործունէութեան այդ կողմը շարժում է ոչ միայն Անգլիական եկեղեցու անդամների, այլև բողոքականների ղեկավարութիւնը: Սակայն ամենքն էլ ընդունում են այն մեծ ծառայութիւնը, որ արել է ընկերութիւնն հէնց Աստուածաշնչի Թարգմանութեան գործում: Ամբողջ մի դար ընկերութիւնն աշխատել է այդ գծուարին գործի վրայ և հասել մեծամեծ հետեւանքների:

Այդ ընկերութեան սկիզբն առնելու ժամանակ Աստուածաշունչը նոյն իսկ 50 լեզուով անգամ Թարգմանուած չէր: Հարիւր տարուց յետոյ այդ ընկերութեան ջանքերով ամբողջ Աստուածաշունչը Թարգմանուած է 97 լեզուների. նոյնքան լեզուներով Թարգմանուած է Նոր-կտակարանը, վերջապէս մէկ կամ մի քանի գրքեր Թարգմանուած են 180 լեզուների, այնպէս որ այժմս Սուրբ գիրքը մասնակի կամ ամբողջութեամբ Թարգմանուած է աւելի քան 370 լեզուների: Ընկերութիւնն իւր գոյութեան ընթացքում տարածել է ու զիրքը 180 միլիոն օրինակից աւելի: Չընայած այո բոլորին՝ ընկերութիւնը դեռ մեծ գործ ունի անելու: Դեռ 450 միլիոն մարդիկ չունին իրենց լեզուով Թարգմանած Աստուածաշունչը և դեռ 108 լեզուով կամ բարբառով Թարգմանուած չէ նրա և ոչ մի գլուխը: Իւր գոյութեան երկրորդ դարում ընկերութիւնը մտադիր է մեծացնել իւր հիմնական դրամագլուխն և հասցնել այն 2 1/2 միլիոն ռուբլու, որով և յոյս ունի լրացնելու վերոյիշեալ կարիքները:

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

Պօլսում որաի պայթիւնից վախճանուել է հայ կաթողիկոսների «Պատրիարք և կաթողիկոս տանն Կիլիկիոյ» կամանուէրէան արքեպիսոփոսը: Տարաբաղգաբար շատ քիչ բան գիտենք հայր կամանուէրէանի գործունէութեան մասին, բայց այն հան-